Շուշանիկ Կուրղինյան

Ազատություն

Ալ. Մյասնիկյանին

Մո՛ւթ էր, դաժան.
Ու ոճիրը թևատարած
Հսկում էր լուռ երկիրը հին,
Մաշված, հյուծված, արյունլվա...
Միայն չարն էր
Հասանելի,
Ընբռնելի,
Շոշափելի:
Միայն չարն էր
Հարախառով ու հետամուտ
Մտքին, հոգուն,
Երազին մոտ,
Բաղձանքի հետ,
Ճամփուն ընկեր:
Միայն չա՛րը,
Որ մարդը կույր
Գերի մնա,
Մարդը հզոր՝
Թև շարժելու ձիրքն ուրանա,
Սողա, խայթե իժի նման,
Սահման գծե իր երկրի մեջ,

Ոսկորի պես բախտ չբաժնե
Ծանոթներին,
Որ մթի մեջ
Կիրքն ու կրոնը,
Միշտ հնավանդ
Խաչն ու լուսին,
Սուտ մեկնումը հավատամքի
Շշմեցնեն միտքը պայծառ,
Որ կորցնե ուղիղ ուղին
Ատե, ատվի:

Ու եռում էր
Աշխատանքը սրբազնագույն,
Աշխատանքը՝ ձեռք մրոտող,
Սիրտը սրբող,
Միտքն ու ձեռքը՝
Հրաշք կերտում
Երկրի վրա,
Օվկիանի տակ .
Լեռների մոտ,
Բաց օդի մեջ . . .
Ու ծորում էր պաղ քրտինքը .
Կոր մեջքերից .
Տաք արյունը:
Արցունքն աղի՝
Բյուր վանքերի,
Պալատների
Բարձր պատին,
Ուղիներում,
Կամուրջներին,
Մութ հանքերում . . .
Ով ջանք վատնում՝ զրկված էր միշտ .
Ով վայելում՝ իրավատեր,

Կուշտ, զոհ, ազահ . . .
Թե
Քայլ հառաջ՝
Ցից, կախաղան,
Գաղտնի պատիժ . . .
Թե
Սուրբ տենչանք՝
Բանտը մռայլ
Ու հալածանք . . .
Ով հանդգնեց տրտունջ ցանել
Հոգիներում,
Ով իր սրտից ջահ էր վառել,
Որ լույս լինի,
Տեսնեն իրար՝
Տանջանքները չգրեցին,
Որ գիրք լիներ .
Շղթաները լեզու չառան,
Որ քարը լար . . .

Ահազանգն անցավ արագ
Ղողանջելով եղբայրության
Աղոթքը նոր:
Գեղեցիկս, դու ճշմարիտ,
Առաքինի, արդարադատ,
Նեղյալին տեր,
Լուսաճաճանչ,
Դու լուսածին,
Մի՛շտ լուսավառ
Ու լուսեղեն՝
Գեղեցիկս,
Լո՜ւր ամենքին՝ հոգնել են շա՜տ .
Տո՛ւր, ամենքին՝ տվել են միշտ .
Գեղեցի՛կս, գեղեցի՛կս:

Որքան անմեղ մեղավորներ . . .
Մեղավորներ,
Մեղքը ծածկած
Ոսկու դեզով . . .
Որքան ձեռքեր
Արյունլվա՝
Լայնածավալ երկրին տեր . . .
Որքան ազատ
Ոճրագործներ,
Որ գրել են օրենքները
Բազմավաստակ ու բազմազան
Ազգերի դեմ . . .
Արծաթասեր մարգարեներ,
Խաչափայտից մտրակ սրած .
Եվ այնպիսին,
Որ խլածը մինչ մահ բավ էր,
Բայց խլում էր մինչև այսօր . . .

Գեղեցիկս . . .
Գեղեցի՛կս,
Դարձյա՞լ գիշեր,
Որ լինի մութ,
Խավար դաժան . . .
Գեղեցի՛կս,
Նորի՞ց հուսալ
Ու համբերել .
Նորի՞ց, նորի՞ց .
Հետ դառնալ . . .
Երազե՛լ քեզ,
Սողալ մթում .
Որոնել քեզ,
Քեզնով ապրել,

Քե՛զ սպասել .
Սպասել քեզ,
Գեղեցի՛կս . . .

1919 թ. 19 փետրվարի